Հավելված

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2021թ. ապրիլի 22-ի թիվ 6/3.2 որոշմամբ

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Գ.Գ.Գևորգյան
«22» ապրիլի 2021թ.

ԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎՈՎ) 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կարգն ու պայմանները:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման» կարգը, ԵՊՀ կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Հեռակա ուսուցման ձևով ԵՊՀ մագիստրատուրայի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ-ի և այլ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (առկա և հեռակա ուսուցման ձևերի) բակալավրիատի, մագիստրատուրայի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

Հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայում կրթությունը կազմակերպվում է միայն վճարովի հիմունքներով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ԵՊՀ ռեկտորի ղեկավարությամբ ձևավորվում է ընդունող հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտորը, ԵՊՀ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտորը, ուսումնամեթոդական վարչության պետը և ուսումնամեթոդական վարչության մագիստրատուրայի բաժնի վարիչը: Դիմորդների գործերն ընդունելու նպատակով ստեղծվում է մագիստրատուրայի ընդունելության հանձնաժողովի օժանդակ համակազմ:

Մագիստրատուրայի ընդունելության հայտերն ուսումնասիրելու, քննությունների արդյունքներն ամփոփելու և դիմորդների ընդունելության վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով ԵՊՀ ռեկտորի հրամանով ստեղծվում է մանդատային հանձնաժողով՝ համապատասխան պրոռեկտորի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետը, ֆակուլտետների դեկանները (ինստիտուտների և կենտրոնների տնօրենները) և ուսումնամեթոդական վարչության մագիստրատուրայի բաժնի վարիչը:

Ընդունելության քննությունների անցկացման նպատակով ԵՊՀ ուսումնական գործընթացը համակարգող համապատասխան պրոռեկտորի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ներգրավվում են տվյալ ֆակուլտետի դեկանը, համապատասխան մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարները և ընդունող հանձնաժողովի ներկայացուցիչը (ըստ անհրաժեշտության):

Օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը կատարվում է՝

ա) ընդհանուր հիմունքներով (կարող են դիմել միայն ԵՊՀ շրջանավարտները համաձայն Կարգի)

բ) հարցազրույցով՝ համաձայն ՀՀ Կառավարության 2011թ.ապրիլի 28-ի №700-Ն որոշմամբ սահմանված կարգի:

5. Հեռակա ուսուցման ձևով 2021-2022 ուսումնական տարվա համար մագիստրատուրայի ընդունելության փաստաթղթերն ընդունվելու են առցանց եղանակով՝ https://admission.ysu.am/ կայքի միջոցով ընթացիկ տարվա սեպտեմբերի 8-ից մինչև հոկտեմբերի 8-ը: Ընդունելության քննությունները անցկացվելու են ընթացիկ տարվա հոկտեմբերի 13-ին և 14-ին:

6. ԵՊՀ վերջին երեք տարվա շրջանավարտների (2019թ., 2020թ., 2021թ.) ընդունելությունը, որոնց ամփոփիչ ատեստավորման գնահատականը 13 և բարձր միավոր է, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ-ը) առնվազն 13 միավոր է, տվյալ (նույն) մասնագիտության հեռակա մագիստրատուրայի վճարովի ուսուցման համակարգում կատարվում է առանց ընդունելության քննության, մրցութային հիմունքներով, մանդատային հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

13-ից ցածր ՄՈԳ ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ տվյալ մասնագիտության բակալավրի կրթական ծրագրին համապատասխան հարցաշարով անցկացված քննության արդյունքների հիման վրա: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին 3 տարվա (2019թ., 2020թ., 2021թ.) ընթացքում զորացրված ԵՊՀ բակալավրիատի շրջանավարտների տվյալ (նույն) մասնագիտությամբ ընդունելությունը կատարվում է հարցազրույցով:

«Իրավագիտություն» մասնագիտության հեռակա ուսուցման ձևով ընդունելության մրցույթին կարող են մասնակցել միայն «Իրավագիտություն» մասնագիտությամբ իրավագիտության բակալավրի որակավորում ունեցող շրջանավարտները:

7. Մասնագիտության փոփոխության դեպքում ԵՊՀ շրջանավարտների մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է տվյալ մասնագիտության բակալավրիատի ծրագրին համապատասխան կազմված հարցաշարով անցկացված քննության արդյունքներով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունները:

Այլ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (առկա և հեռակա ուսուցման ձևերի) բակալավրիատի, մագիստրատուրայի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտների ընդունելությունը կատարվում է միայն քննությամբ՝ առարկայական քննական հանձաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

8. Հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրա ընդունված դիմորդները պարտավոր են մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 25-ը վճարել ուսման վարձավճարը (մագիստրատուրայի համապատասխան մասնագիտության 1-ին կուրսի 1-ին կիսամյակի համար նախատեսված ուսման վարձի առնվազն 25%-ը), որից հետո կատարվում է նրանց հրամանագրումը՝ ըստ մասնագիտությունների և մագիստրոսական ծրագրերի:

3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

9. Մագիստրատուրայի ընդունելության համար դիմորդները պետք է սքանավորեն և մուտքագրեն հետևյալ փաստաթղթերը՝

ա) մագիստրատուրայի ընդունելության լրացված դիմում-հայտ, որտեղ դիմորդը, ըստ նախապատվության, կարող է նշել առավելագույնը 2 մագիստրոսական կրթական ծրագիր: Նշված առաջին ծրագրի չբացվելու դեպքում դիմորդը մասնակցում է իր կողմից նշած երկրորդ կրթական ծրագրի մրցույթին,

բ) բարձրագույն կրթության դիպլոմի և հավելվածի բնօրինակներն ու պատճենները, (ԵՊՀ 2021թ. շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած) ներկայացնում են ակադեմիական տեղեկագիր՝ կնքված և ստորագրված ֆակուլտետի կողմից, իսկ ՀՀ այլ ԲՈՒՀ-երի 2021թ. շրջանավարտները (դեռևս դիպլոմ չստացած)՝ տվյալ ԲՈՒՀ-ի ռեկտորի ստորագրությամբ տեղեկանք բակալավրիատի շրջանավարտ լինելու մասին և ակադեմիական տեղեկագիր՝ կնքված և ստորագրված),

գ) արտասահմանյան ԲՈՒՀ-ի դիպլոմ ներկայացնելու դեպքում դիմորդը դիպլոմի հետ պետք է ներկայացնի նաև «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից» տեղեկանք՝ դիպլոմի համարժեքության մասին,

դ) 2 լուսանկար (3x4 չափսի),

ե) զինվորական գրքույկի (առկայության դեպքում) բնօրինակն ու պատճենները (1-4-րդ և 18-19-րդ էջերը),

զ) ածանցի կամ նույնականացման քարտի բնօրինակն ու պատճենը,

է)ընդունելության ծառայությունների համար գանձվող 1500 ՀՀ դրամի վճարման անդորրագիրը:

13. Ընդունելության հրամանը ստանալուց հետո համապատասխան ֆակուլտետի գործավարը հավաքագրում է ուսանողի առցանց մուտքագրած փաստաթղթերը և կազմում է ուսանողի անձնական գործ: Անհրաժեշտության դեպքում ֆակուլտետը ուսանողից կարող է պահանջել սքանավորած փաստաթղթերի բնօրինակներն ու պատճենները: